ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԵՊԼՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2018 ԹՎԱԿԱՆԻ 12.04.2018թ. № 7 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՊԼՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

_____ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՊԼՀ-ՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ԶՈՒԳԱՀԵՌ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Կանոնակարգով սահմանվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) բակալավրիատի շրջանավարտներին հիմնական որակավորմանը զուգահեռ մանկավարժի լրացուցիչ որակավորում շնորհելու կարգը:

1.2. Սույն Կանոնակարգը մշակվել է բարձրագույն կրթության առաջին աստիճանում մասնագիտական հիմնական որակավորմանը զուգահեռ լրացուցիչ որակավորումներ շնորհելու միջազգային կրթափորձի ուսումնասիրության արդյունքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

1.3. Մանկավարժի լրացուցիչ որակավորմամբ ծրագրի ուսուցումը կազմակերպվում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման օրինակելի կարգի» պահանջներին համապատասխան:

1.4. Բարձրագույն մասնագիտական կրթության ՄԿԾ-երի՝ (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2015թ.-ի հուլիսի 3-ի թիվ 647 Ա/Ք հրամանով) ցանկից նախարարության հետ համաձայնեցված և ԵՊԼՀ-ի կողմից հաստատված մասնագիտության դասընթացներին ուսանողները մասնակցում են կամավորության սկզբունքով, իրենց դիմումի համաձայն:

1.5. Մանկավարժի լրացուցիչ որակավորմամբ կրթության կազմակերպումը ուսանողին հնարավորություն է ընձեռնում ստանալու որևէ մեկ օտար լեզվի (ռուսերեն/կամ/անգլերեն/կամ/ֆրանսերեն/կամ/գերմաներեն) ուսուցչի որակավորում:

1.6. Բակալավրիատի շրջանավարտներին հիմնական որակավորումից բացի լրացուցիչ որակավորում շնորհելու համար նախատեսվում է 30 կրեդիտ ծավալով մանկավարժական կրթության լրացուցիչ կրթաբլոկի ուսուցում:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՐԹԱԲԼՈԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

023201.00.6 Լեզվաբանություն

- 023201.03.6 Ռուսաց լեզու
- 023201.04.6 Անգլերեն լեզու
- 023201.05.6 Գերմաներեն լեզու
- 023201.06.6 Ֆրանսերեն լեզու
- 023201.08.6 Իտալրեն լեզու
- 023201.01.6 Թարգմանչական գործ /ըստ լեզուների/

023102.00.6 Օտար լեզու և գրականություն

- 023102.01.6 Ռուսաց լեզու և գրականություն

2.1. Մանկավարժական կրթաբլոկը ներառում է 6 մոդուլ՝ 4 բաղադրիչով՝

ա) կրթական (5 պարտադիր դասընթաց),
բ) հետազոտական (կուրսային աշխատանք),
գ) մանկավարժական պրակտիկա,
դ) ամփոփիչ ատեստավորում:

Մոդուլ 1 Հոգեբանություն	**4 կրեդիտ**
1.1. Ընդհանուր հոգեբանություն	2 կրեդիտ
1.2. Տարիքային հոգեբանություն	2 կրեդիտ
Մոդուլ 2 Մանկավարժություն	**6 կրեդիտ**
2.1. Ընդհանուր մանկավարժություն 1	2 կրեդիտ
2.2. Ընդհանուր մանկավարժություն 2	2 կրեդիտ
2.3. Ընդհանուր մանկավարժություն 3	2 կրեդիտ
Մոդուլ 3 Մեթոդիկա	**4 կրեդիտ**
3.1. Մասնագիտական առաջին լեզվի դասավանդման մեթոդիկա 1	2 կրեդիտ
3.2. Մասնագիտական առաջին լեզվի դասավանդման մեթոդիկա 2	2 կրեդիտ
Մոդուլ 4 Հետազոտական աշխատանք	**2 կրեդիտ**
4.1.Կուրսային աշխատանք (թեմա՝ մանկավարժություն, լեզուների դասավանդման մեթոդիկա)	2 կրեդիտ
Մոդուլ 5 5.1. Մանկավարժական պրակտիկա	**6 կրեդիտ**
Մոդուլ 6 6.1.Ամփոփիչ ատեստավորում	**8 կրեդիտ**
Ընդամենը	**30 կրեդիտ**

2.2. «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՐԹԱԲԼՈԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն

011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն
011401.22.6 Գերմաներեն լեզու և գրականություն
011401.23.6 Ֆրանսերեն լեզու և գրականություն

2.2.1. Մանկավարժական կրթաբլոկը ներառում է 4 մոդուլ՝ 4 բաղադրիչով՝

ա) կրթական (2 պարտադիր դասընթաց),
բ) հետազոտական (կուրսային աշխատանք),
գ) մանկավարժական պրակտիկա,
դ) ամփոփիչ ատեստավորում:

Մոդուլ 1 **Մասնագիտական 2-րդ լեզվի մեթոդիկա**	**10 կրեդիտ**
1.1. Մասնագիտական 2-րդ լեզվի մեթոդիկա	5 կրեդիտ
1.2. Մասնագիտական 2-րդ լեզվի մեթոդիկա	5 կրեդիտ
Մոդուլ 2 **Հետազոտական աշխատանք**	**4 կրեդիտ**
2.1. Կուրսային աշխատանք (թեմա՝ 2-րդ օտար լեզվի դասավանդման մեթոդիկա)	4 կրեդիտ
Մոդուլ 3 3.1. Մանկավարժական պրակտիկա	**6 կրեդիտ**
Մոդուլ 4 4.1. Ամփոփիչ ատեստավորում (մասնագիտական 2-րդ լեզու)	**10 կրեդիտ**
Ընդամենը	**30 կրեդիտ**

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

3.1. «Մանկավարժության բակալավրի» լրացուցիչ որակավորում ստանալու համար «Լեզվաբանություն» և «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությունների ուսանողները ուսումնառության 2-րդ կիսամյակում, իսկ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության ուսանողները՝ 4-րդ կիսամյակում մինչև ապրիլի 30-ը համապատասխան ֆակուլտետի դեկանատ են ներկայացնում դիմում համապատասխան լրացուցիչ որակավորման կրթական ծրագրում ընդգրկվելու համար: Դիմում ներկայացրած ուսանողների հետ մեկ ամսվա ընթացքում կնքվում է պայմանագիր՝ լրացուցիչ որակավորմամբ ուսուցման կազմակերպման մասին:

3.2. Ընդունելությունը մանկավարժության բակալավրի լրացուցիչ որակավորմամբ ՄԿԾ-ում կազմակերպվում է մրցույթային սկզբունքով՝ ըստ ԵՊԼՀ-ի ռեկտորի հրամանով տվյալ ուսումնական տարվա համար սահմանված տեղերի քանակի:

3.3. Ուսուցումը «Մանկավարժության բակալավրրի» լրացուցիչ որակավորմամբ ՄԿԾ-ում կազմակերպվում է վճարովի հիմունքներով: Վճարումը կատարվում է յուրաքանչյուր կիսամյակում՝ տվյալ կիսամյակի կրեդիտների քանակին համապատասխան: Ռեկտորի հրամանով սահմանվում է մեկ կրեդիտի արժեքը (ինքնարժեքի սկզբունքով):

3.4. Լրացուցիչ որակավորման մասնագիտության ուսուցումը **023201.00.6 Լեզվաբանություն** (023201.03.6 Ռուսաց լեզու, 023201.04.6 Անգլերեն լեզու, 023201.05.6 Գերմաներեն լեզու, 023201.06.6 Ֆրանսերեն լեզու, 023201.08.6 Իտալերեն լեզու, 023201.01.6 Թարգմանչական գործ /ըստ լեզուների/) և **023102.00.6 Օտար լեզու և գրականություն** (023102.01.6 Ռուսաց լեզու և գրականություն) մասնագիտությունների ուսանողների համար կազմակերպվում է 3-րդից 8-րդ կիսամյակներում (հավելված 1), իսկ **011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն** (011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն, 011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն, 011401.22.6 Գերմաներեն լեզու և գրականություն, 011401.23.6 Ֆրանսերեն լեզու և գրականություն) մասնագիտության ուսանողների համար՝ 5-րդից 8-րդ կիսամյակներում (հավելված 2)՝ ԵՊԼՀ-ի բակալավրիատի ուսանողների ուսումնառության կազմակերպման և գիտելիքների ներկիսամյակային և ամփոփիչ ստուգման տվյալ ուսումնական տարվա ժամանակացույցին համապատասխան:

3.5. Լրացուցիչ որակավորմամբ մասնագիտության որևէ մոդուլից անբավարար գնահատական ստանալը հիմք չի հանդիսանում հիմնական մասնագիտության շրջանակում փոխատեղման մրցույթին մասնակցելու կամ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու ուսանողի իրավունքը սահմանափակելու համար:

3.6. Լրացուցիչ որակավորման մասնագիտության ամփոփիչ ատեստավորումը չանցնելու դեպքում ուսանողը ստանում է դիպլոմ՝ միայն հիմնական մասնագիտության որակավորմամբ:

3.7. ԵՊԼՀ-ի բակալավրիատի «Լեզվաբանություն», «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությունների կրթական ծրագրի «240 կրեդիտ + լրացուցիչ որակավորման 30 կրեդիտ» և «Մանսագիտական մանկավարժություն» մասնագիտության «240 կրեդիտ + լրացուցիչ որակավորման 30 կրեդիտ» ՄԿԾ-ի ուսումնառության ավարտին շրջանավարտին շնորհվում է երկու որակավորում:

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԿԾ-ի ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1. Լրացուցիչ որակավորմամբ ՄԿԾ-ի տեսական դասընթացները վարողների 50 տոկոսը պետք է ունենա գիտական կոչում և (կամ) կոչում, իսկ գործնական դասընթացները վարող մասնագետների գիտահետազոտական

հետաքրքրությունների շրջանակը պետք է համապատասխանի դասավանդվող դասընթացներին:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Լրացուցիչ որակավորման ուսուցման կազմակերպման և իրականացման համակարգումը վերապահվում է ԵՊԼՀ-ի ուսումնական բաժնին, Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետին և Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնին:

5.2 ԵՊԼՀ-ում լրացուցիչ որակավորմամբ ուսուցումը մեկնարկելու է 2018-2019 ուսումնական տարվանից:

Հավելված 1

Մանկավարժի լրացուցիչ որակավորմամբ ուսուցման կազմակերպման ժամանակացույց

«Լեզվաբանություն» և «Օտար լեզու և գրականություն»

1	ՈՒսումնառության 3-րդ կիսամյակ	Ընդհանուր հոգեբանություն
2	ՈՒսումնառության 4-րդ կիսամյակ	Ընդհանուր մանկավարժություն Տարիքային հոգեբանություն
3	ՈՒսումնառության 5-րդ կիսամյակ	Ընդհանուր մանկավարժություն Մասնագիտական 1-ին լեզվի դասավանդման մեթոդիկա
4	ՈՒսումնառության 6-րդ կիսամյակ	Մասնագիտական 1-ին լեզվի դասավանդման մեթոդիկա Կուրսային աշխատանք
5	ՈՒսումնառության 7-րդ կիսամյակ	Ընդհանուր մանկավարժություն Ավարտական աշխատանք
6	ՈՒսումնառության 8-րդ կիսամյակ	Մանկավարժական պրակտիկա Ամփոփիչ ատեստավորում

Հավելված 2

Մանկավարժի լրացուցիչ որակավորմամբ ուսուցման կազմակերպման ժամանակացույց

«Մասնագիտական մանկավարժություն»

1	ՈՒսումնառության 5-րդ կիսամյակ	Մասնագիտական 2-րդ լեզվի դասավանդման մեթոդիկա
2	ՈՒսումնառության 6-րդ կիսամյակ	Մասնագիտական 2-րդ լեզվի դասավանդման մեթոդիկա Կուրսային աշխատանք
3	ՈՒսումնառության 7-րդ կիսամյակ	Ավարտական աշխատանք
4	ՈՒսումնառության 8-րդ կիսամյակ	Մանկավարժական պրակտիկա Ամփոփիչ ատեստավորում

Հ	Հիմնական մասնագիտության դասիչ և անվանում	Որակավորում	Լրացուցիչ որակավորում
1	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.03.6 Ռուսաց լեզու	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
2	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.04.6 Անգլերեն լեզու	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
3	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.05.6 Գերմաներեն լեզու	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
4	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.06.6 Ֆրանսերեն լեզու	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
5	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.08.6 Իտալերեն լեզու	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
6	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (Անգլերեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
7	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (ֆրանսերեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
8	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (Իտալերեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
9	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (Գերմաներեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
10	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (Իսպաներեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
11	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (Չինարեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
12	**023201.00.6 Լեզվաբանություն՝** 023201.01.6 Թարգմանչական գործ՝ըստ լեզուների (Կորեերեն և հայերեն)	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր
13	**023102.00.6 Օտար լեզու և գրականություն՝** 023102.01.6 Ռուսաց լեզու և գրականություն	Բանասիրության բակալավր	Մանկավարժության բակալավր

Հավելված 4

Հ	Հիմնական մասնագիտության դասիչ և անվանում	Որակավորում	Լրացուցիչ որակավորում (2-րդ մասնագիտական լեզվի)
1	**011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն՝** 011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր	Մանկավարժության բակալավր
2	**011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն՝** 011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր	Մանկավարժության բակալավր
3	**011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն՝** 011401.23.6 Ֆրանսերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր	Մանկավարժության բակալավր
4	**011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն՝** 011401.22.6 Գերմաներեն և գրականություն	Մանկավարժության բակալավր	Մանկավարժության բակալավր